ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-19/2-1

ք.Երևան «21» «02» 2019թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, ի դեմս ծառայության պետ Ա.Մխոյանի, որը գործում է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և ՀՀ մամուլի տարածման գործակալություն ՓԲԸ-ն, ի դեմս գործադիր տնօրեն Արևհատ Մխիթարյանի, որը գործում է ՀՀ մամուլի տարածման գործակալություն ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող», մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 21.02.2019թ.-ին կնքված N ՀՀ ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-19/2-1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 8.5 կետը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության՝ հանրային կապերի բաժնի պետի՝ Ն.Նավիկյանի տեղեկանքը առ այն, որ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կարիքների համար 2019թ.-ի ընթացքում պարբերական մամուլի գնման Պայմանագրով նախատեսվել էր «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի յուրաքանչյուր հրապարակումից 13 օրինակ՝ 12-ը մատակարարել բոլոր քրեակատարողական հիմնարկներ և մեկը քրեակատարողական ծառայություն, սակայն ելնելով ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պարբերական մամուլի անհրաժեշտության բացակայությունից՝ նշված օրաթերթի յուրաքանչյուր հրապարակումից մեկ օրինակ մատակարարել միայն քրեակատարողական ծառայությանը: Հաշվի առնելով նշված փաստը կողմերը որոշեցին՝ նվազեցնել «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի մատակարարվող քանակը 2520 հատով, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել ֆինանսական հատկացումների նվազեցում և այդ գումարի չափով՝ 252000 ՀՀ դրամով, նվազեցնել Պայմանագրի գինը:

1.2 Պայմանագրի 3.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Պայմանագրի գինը կազմում է 365600 (երեք հարյուր վաթսունհինգ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

1.3 Պայմանագրի N1 հավելվածի՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ի, 8-րդ չափաբաժնի սյունակը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N1-ի:

1.4 Պայմանագրի N2 հավելվածի՝ «վճարման ժամանակացույց»-ի, 8-րդ չափաբաժնի սյունակը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N2-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-19/2-1 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը և իր N1 և N2 հավելվածները կազմված են 4 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, համաձայնագրի N1 և N2 հավելվածները, համարվում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն	ՀՀ մամուլի տարածման գործակալություն ՓԲԸ
ք. Երևան, Արշակունյաց-63	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Սասունցի Դավթի
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	հրապարակ 2 Արարատ բանկ ԲԲԸ
Հ/Հ 900011175016	Հ/Հ 15100019867201 00
ՀՎՀՀ 02204739	ՀՎՀՀ 00401345
Ծառայության պետ՝	Գործադիր տնօրեն՝
Ա.Մխոյան	Ա.Մխիթարյան
_____	_____
(ստորագրություն)	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«21» « 02 » 2019 թ. կնքված
N 1 Համաձայնագրի
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-19/2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝ 8-ՐԴ ՉԱՓԱԲԱԺԻՆ

ՀՀ դրամ

Ապրանքի										
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
								հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
8	22211300/9	Պարբերական մամուլ, Հայաստանի Հանրապետություն	Շաբաթը 5 անգամ, օրաթերթ մեկական օրինակ յուրաքանչյուր հրապարակումից	հատ	100	21000	210	Ք.Երևան, Արշակունյաց 63	210	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 20.12.2019թ.

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011474534
ՀՎՀՀ 02204739

Ծառայության պետ
Ա.Մխոյան

(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

ՀՀ մամուլի տարածման գործակալություն ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Սասունցի Դավթի
հրապարակ 2 Արարատ բանկ ԲԲԸ
Հ/Հ 1510001986720100
ՀՎՀՀ 00401345

Գործադիր տնօրեն
Ա.Մխիթարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«21» « 02 » 2019 թ. կնքված
N 1 Համաձայնագրի
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-19/2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝ 8-ՐԴ ՉԱՓԱԲԱԺԻՆ

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում												
			Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	ընդամենը
8	22211300/9	Պարբերական մամուլ, Հայաստանի Հանրապետություն	-	-	-	6930	6930	6930	14070	14070	14070	21000	21000	21000	21000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011474534
ՀՎՀՀ 02204739

Ծառայության պետ՝
Ա.Միսոյան

(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

ՀՀ մամուլի տարածման գործակալություն ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Սասունցի Դավթի
հրապարակ 2 Արարատ բանկ ԲԲԸ
Հ/Հ 1510001986720100
ՀՎՀՀ 00401345

Գործադիր տնօրեն՝
Ա.Մխիթարյան

/ստորագրություն/
Կ.Տ